ՀԱԿՈԲՅԱՆՆԵՐ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ, ք. Երևան, Բագրատունյաց 53-55, ԱՀ, ք. Ստեփանակերտ, Թումանյան 95
e-mail: hamahaykakankentron@mail.ru, հեռ.՝ +374 96 33 92 12

ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան
համայնքի համայնքապետ
Զ. Մանուկյանին

Հարգելի՛ պարոն Մանուկյան, հաշվի առնելով այն, որ մենք՝ այսինքն «Հակոբյաններ համահայկական» կենտրոնը՝ գլխավորությամբ ինձ՝ Սմբատ Հակոբյանի, համագործակցելով ՀՀ Շիրակի մարզպետարանի՝ գլխավորությամբ Մուշեղ Մուրադյանի, և ՀՀ Շիրակի մարզի խոշորացված համայնքների՝ այս դեպքում Ախուրյան համայնքի՝ գլխավորությամբ ձեր՝ Զ. Մանուկյանի հետ եկել ենք եռակողմ պայմանավորվածության մի ազգանվեր նախաձեռնության շրջանակներում, որի արդյունքում համատեղ ֆինանսավորմամբ իրականացնում ենք Շիրակի մարզի հանրակրթական դպրոցներում կրթությանը խրախուսող մի գերարդյունավետ նվիրյալ նախաձեռնություն, որի շրջանակներում Ախուրյան համայնքի բոլոր դպրոցներից ընտրված լավագույն գերազանց սովորող աշակերտները որպես խրախուսանք 7-օրյա կրթական շրջագայության են մեկնում ԱՄԷ՝ Դուբայ քաղաք՝ միջպետական կրթական խրախուսման ծրագրի սահմանված ժամկետներից մի քանի անգամ խոշորացված համայնքներից եկող տարբեր խնդիրների պատճառով հետաձգվեց ծրագիրը,որից հետո ՀՀ Շիրակի մարզի մարզպետարանի շենքում Շիրակի մարզպետ Մուշեղ Մուրադյանի նախաձեռնությամբ և գլխավորությամբ նաև մեր՝ «Հակոբյաններ Համահայկական» կենտրոնի ղեկավարի և ՀՀ Շիրակի մարզի բոլոր խոշորացված համայնքների ղեկավարների մասնակցությամբ տեղի ունեցավ ծրագրի շուրջ վերջնական և բովանդակալից հանդիպումը, որի ավարտին որոշվեց՝ մոտավորապես 25% -ով կրճատել ծրագրի ընդհանուր ֆինանսական ներդրումը, որի շրջանակում համայնքների կողմից ներդրվող գումարը դարձավ 190.000 ՀՀ դրամ:

Քանզի երեխաները մեկնելու են մոտակա 3-4 շաբաթների ընթացքում, խնդրում ենք ձեզ, որ ձեր կողմից ներդրվող գումարը, որը կազմում է 1 երեխայի հաշվով 190.000 ՀՀ դրամ, այսինքն՝ 24 մասնակից և մեկ պատասխանատու՝ 25 մասնակից՝ 5.320.000 ՀՀ դրամ, որի մեջ ներառված են 12% հարկերը ընդհանուր գումարը փոխանցել 3 աշխատանքային օրվա ընթացքում:

Գրությանը կից ներկայացնում ենք Հակոբյաններ համահայկական կենտրոնի ռեկվիզիտները:

Հարգանքներով՝ Հակոբյաններ
համահայկական կենտրոնի
նախագահ՝ Սմբատ Հակոբյան